# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 փետրվարի 2014թվականի N 34-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի
2013թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
2. Դիլիջանի քաղաքային համայնքի տարածքում ինքնակամ կառուցված շինությունը Դիլիջանի համայնքի գույքացանկում ընդգրկելու մասին
Զեկ.Ա.Սանթրոսյան
3. Դիլիջանի քաղաքապետարան դիմած քաղաքի
սոցիալապես անապահով վիճակում գտնվող քաղաքացիներին դրամական օգնություն տրամադրելու մասին
Զեկ.Ա.Սանթրոսյան
4. Գույքի օտարման մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
5. Դիլիջանի Կամոյի փողոցի 3-րդ նրբ. թիվ 14/1 հասցեի
16.0քմ հողամասն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին
Զեկ.Ա.Սանթրոսյան
6. Դիլիջանի Կալինինի փողոցի թիվ 87/3 հասցեի ավտոտնակը և վերջինիս սպասարկման
23.6քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին
Զեկ.Ա.Սանթրոսյան

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 փետրվարի 2014թվականի N 35-Ն

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի եկամուտների և ծախսերի տարեկան կատարման հաշվետվությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Դիլիջանի քաղաքային համայնքի բյուջեի եկամուտների տարեկան կատարողականը /հատված թիվ 1/:
2. Հաստատել Դիլիջանի քաղաքային համայնքի բյուջեի ծախսերի տարեկան կատարողականը /հատված թիվ 2/:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ
2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ
3. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
6. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
7. ՄԱՆԹԱՇՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
8. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
9. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԳԱՆ
10. ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(01.01. 2013թ. - 01.01.2014թ. ժամանակահատվածի համար)

| Եկամտատեսակները | Տարեկան ծրագիր | | | Փաստացի | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը (ս.11+ս.12) | այդ թվում՝ վարչական մաս | այդ թվում՝ ֆոնդային մաս | Ընդամենը (ս.8+ս.9) | այդ թվում՝ վարչական մաս | այդ թվում՝ ֆոնդային մաս |
| 2 | 10 | 11 | 12 | 7 | 8 | 9 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 348,804.4 | 346,804.4 | 2,000.0 | 345,527.7 | 343,606.5 | 1,921.2 |
| այդ թվում՝ 1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ | 82,720.1 | 82,720.1 | X | 79,124.0 | 79,124.0 | X |
| 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից | 40,358.6 | 40,358.6 | X | 36,968.3 | 36,968.3 | X |
| Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | 17,840.7 | 17,840.7 | X | 17,447.7 | 17,447.7 | X |
| Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 22,517.9 | 22,517.9 | X | 19,520.6 | 19,520.6 | X |
| 1.2 Գույքային հարկեր այլ գույքից | 25,788.5 | 25,788.5 | X | 25,894.3 | 25,894.3 | X |
| Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 25,788.5 | 25,788.5 | X | 25,894.3 | 25,894.3 | X |
| 1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ | 11,973.0 | 11,973.0 | X | 12,222.9 | 12,222.9 | X |
| այդ թվում՝ Տեղական տուրքեր | 11,973.0 | 11,973.0 | X | 12,222.9 | 12,222.9 | X |
| այդ թվում՝ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար | 1,050.0 | 1,050.0 | X | 1,060.0 | 1,060.0 | X |
| որից՝ աա) Հիմնական շինությունների համար | 1,050.0 | 1,050.0 | X | 1,060.0 | 1,060.0 | X |
| աբ) Ոչ հիմնական շինությունների համար | 0.0 | | X | 0.0 | | X |
| բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) կատարելու թույլտվության համար | 50.0 | 50.0 | X | 0.0 | | X |
| գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար | 10.0 | 10.0 | X | 15.0 | 15.0 | X |
| դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար | 3,200.0 | 3,200.0 | X | 3,265.0 | 3,265.0 | X |
| ե) Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմ. թույլտվության համար | 163.0 | 163.0 | X | 187.4 | 187.4 | X |
| զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար | 1,050.0 | 1,050.0 | X | 1,200.0 | 1,200.0 | X |
| ը) Համաքաղաքային կանոններին համապատասխան Երևան քաղաքի և քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար | 300.0 | 300.0 | X | 200.0 | 200.0 | X |
| թ) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար | 6,000.0 | 6,000.0 | X | 6,193.5 | 6,193.5 | X |
| ժ) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենեն և կրկնօրինակներ տրամադրելու համար | 100.0 | 100.0 | X | 52.0 | 52.0 | X |
| ժբ) Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար | 50.0 | 50.0 | X | 50.0 | 50.0 | X |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1.4 Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ | 4,600.0 | 4,600.0 | X | 4,038.5 | 4,038.5 | X |
| այդ թվում՝Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր | 4,600.0 | 4,600.0 | X | 4,038.5 | 4,038.5 | X |
| այդ թվում՝ա) Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու համար | 1,400.0 | 1,400.0 | X | 1,333.0 | 1,333.0 | X |
| բ) Նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու համար | 3,200.0 | 3,200.0 | X | 2,705.5 | 2,705.5 | X |
| **2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ** | **189,667.4** | **187,667.4** | **2,000.0** | **189,588.6** | **187,667.4** | **1,921.2** |
| **2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից** | **187,667.4** | **187,667.4** | **X** | **187,667.4** | **187,667.4** | **X** |
| որից՝ Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 172,110.3 | 172,110.3 | X | 172,110.3 | 172,110.3 | X |
| գ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | 15,557.1 | 15,557.1 | X | 15,557.1 | 15,557.1 | X |
| **2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից** | 2,000.0 | X | 2,000.0 | 1,921.2 | | 1,921.2 |
| ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավոր-ման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | 2,000.0 | X | 2,000.0 | 1,921.2 | | 1,921.2 |
| **3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** | **76,416.9** | **76,416.9** | **0.0** | **76,815.1** | **76,815.1** | **X** |
| **այդ թվում՝3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ** | **25,400.0** | **25,400.0** | **X** | 25,610.3 | 25,610.3 | X |
| այդ թվում՝ Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | 8,500.0 | 8,500.0 | X | 8,737.8 | 8,737.8 | X |
| Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփ. պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ | 6,500.0 | 6,500.0 | X | 6,101.5 | 6,101.5 | X |
| Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | 10,400.0 | 10,400.0 | X | 10,771.0 | 10,771.0 | X |
| **3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից** | 1,792.1 | 1,792.1 | X | 1,792.1 | 1,792.1 | X |
| Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազ-րությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | 1,792.1 | 1,792.1 | X | 1,792.1 | 1,792.1 | X |
| **3.5 Վարչական գանձումներ** | **47,700.0** | **47,700.0** | **X** | **47,855.9** | **47,855.9** | **X** |
| այդ թվում՝Տեղական վճարներ | 27,560.0 | 27,560.0 | X | 20,375.4 | 27,480.5 | X |
| Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | 20,140.0 | 20,140.0 | X | 20,375.4 | 20,375.4 | X |
| **3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից** | **1,524.8** | **1,524.8** | **X** | 1,556.8 | 1,556.8 | X |
| ա/բ՝Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ | 1,524.8 | 1,524.8 | X | 1,556.8 | 1,556.8 | X |

*Համայնքի ղեկավար* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Ֆինանսական բաժնի պետ* *Գ.ԴԱՎԹՅԱՆ*

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(գործառական դասակարգմամբ)

(01.01.2013թ. - 01.01.2014թ. ժամանակահատվածի համար)

| Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Տարեկան ծրագիր | | | Փաստացի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ընդամենը (ս.13 + ս14) | այդ թվում վարչական բյուջե | այդ թվում ֆոնդային բյուջե | Ընդամենը (ս.10 + ս11) | այդ թվում վարչական բյուջե | այդ թվում ֆոնդային բյուջե |
| 2 | 3 | 4 | 5 | 12 | 13 | 14 | 9 | 10 | 11 |
| X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | 485,380.4 | 346,804.4 | 138,576.0 | 256,207.1 | 343,606.5 | -87,399.4 |
| 01 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 90,287.9 | 80,287.9 | 10,000.0 | 88,322.1 | 78,866.4 | 9,455.7 |
| | | | այդ թվում՝ | | | | | | |
| 01 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում | 85,716.0 | 75,716.0 | 10,000.0 | 84,286.7 | 74,831.0 | 9,455.7 |
| 01 | 3 | 3 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 2,166.9 | 2,166.9 | | 2,164.9 | 2,164.9 | |
| 01 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 2,405.0 | 2,405.0 | | 1,870.5 | 1,870.5 | |
| 02 | 0 | 0 | ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 220.0 | 220.0 | | 220.0 | 220.0 | |
| 02 | 2 | 1 | Քաղաքացիական պաշտպանություն | 220.0 | 220.0 | | 220.0 | 220.0 | |
| 04 | 0 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | -88,894.0 | 30.0 | -88,924.0 | -196,130.1 | 30.0 | -196,160.1 |
| 04 | 2 | 1 | Գյուղատնտեսություն | 30.0 | 30.0 | | 30.0 | 30.0 | |
| 04 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | 111,076.0 | | 111,076.0 | 106,050.3 | | 106,050.3 |
| 04 | 9 | 1 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | -200,000.0 | | -200,000.0 | -302,210.4 | | -302,210.4 |
| 05 | 0 | 0 | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 89,056.0 | 50,056.0 | 39,000.0 | 88,180.3 | 49,185.3 | 38,995.0 |
| 05 | 1 | 1 | Աղբահանում | 52,056.0 | 50,056.0 | 2,000.0 | 51,180.3 | 49,185.3 | 1,995.0 |
| 05 | 2 | 1 | Կեղտաջրերի հեռացում | 37,000.0 | | 37,000.0 | 37,000.0 | | 37,000.0 |
| 06 | 0 | 0 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ | 126,662.0 | 37,162.0 | 89,500.0 | 61,263.6 | 36,562.6 | 24,701.0 |
| | | | այդ թվում՝ | | | | | | |
| 06 | 1 | 1 | Բնակարանային շինարարություն | 74,000.0 | | 74,000.0 | 20,409.6 | | 20,409.6 |
| 06 | 4 | 1 | Փողոցների լուսավորում | 47,752.0 | 32,252.0 | 15,500.0 | 35,944.0 | 31,652.6 | 4,291.4 |
| 06 | 6 | 1 | Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ | 4,910.0 | 4,910.0 | | 4,910.0 | 4,910.0 | |
| 08 | 0 | 0 | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ | 73,342.5 | 51,092.5 | 22,250.0 | 54,068.2 | 51,092.5 | 2,975.7 |
| | | | այդ թվում՝ | | | | | | |
| 08 | 2 | 1 | Գրադարաններ | 17,024.8 | 17,024.8 | | 17,024.8 | 17,024.8 | |
| 08 | 2 | 2 | Թանգարաններ և ցուցասրահներ | 20,633.7 | 11,633.7 | 9,000.0 | 11,633.7 | 11,633.7 | |
| 08 | 2 | 3 | Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ | 17,797.0 | 15,797.0 | 2,000.0 | 17,718.2 | 15,797.0 | 1,921.2 |
| 08 | 2 | 4 | Այլ մշակութային կազմակերպություններ | 7,295.0 | 6,295.0 | 1,000.0 | 7,099.5 | 6,295.0 | 804.5 |
| 08 | 3 | 2 | Հրատարակչություններ, խմբագրություններ | 342.0 | 342.0 | | 342.0 | 342.0 | |
| 08 | 6 | 1 | Հանգիստ, մշակույթ, կրոն | 10,250.0 | | 10,250.0 | 250.0 | | 250.0 |
| 09 | 0 | 0 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | 177,827.2 | 121,577.2 | 56,250.0 | 154,170.0 | 121,536.7 | 32,633.3 |
| | | | այդ թվում՝ | | | | | | |
| 09 | 1 | 1 | Նախադպրոցական կրթություն | 95,000.5 | 85,000.5 | 10,000.0 | 89,052.8 | 84,960.0 | 4,092.8 |
| 09 | 5 | 1 | Արտադպրոցական դաստիարակություն | 80,233.3 | 33,983.3 | 46,250.0 | 62,523.8 | 33,983.3 | 28,540.5 |
| 09 | 6 | 1 | Կրթությանը տրամադրվող օժանդակ | 2,593.4 | 2,593.4 | | 2,593.4 | 2,593.4 | |
| 10 | 0 | 0 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 6,288.0 | 6,288.0 | 0.0 | 6,113.0 | 6,113.0 | 0.0 |
| | | | այդ թվում՝ | | | | | | |
| 10 | 4 | 1 | Ընտանիքի անդամներ և զավակներ | 4,000.0 | 4,000.0 | | 3,825.0 | 3,825.0 | |
| 10 | 7 | 1 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) | 2,288.0 | 2,288.0 | | 2,288.0 | 2,288.0 | |
| 11 | 0 | 0 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ | 10,590.8 | 90.8 | 10,500.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | այդ թվում՝ | | | | | | |
| 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | 10,590.8 | 90.8 | 10,500.0 | 0.0 | | |

Համայնքի ղեկավար — Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ֆինանսական բաժնի պետ — Գ.ԴԱՎԹՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2014թվականի N 37-Ա

### ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ ԴԻՄԱԾ ՔԱՂԱՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան և համայնքի ավագանուն են դիմել թվով 12 քաղաքացիներ հայտնելով, որ փաստացի գտնվում են սոցիալապես անապահով վիճակում և դիմումներում նշված խնդիրները ֆինանսական տեսանկյունից չեն կարող լուծել սեփական միջոցներով :

Համայնքի ղեկավարը քաղաքացիների դիմումները ներկայացրել է Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու քննարկմանը ՝ դիմումներում նշված խնդիրների լուծմանը աջակցելու նպատակով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և ներքոնշյալ քաղաքացիներին ցույց տալ դրամական օգնություն, այդ նպատակի համար Դիլիջանի քաղաքային համայնքի 2014թ. բյուջեի «Ընտանիքի անդամներ և զավակներ» /բաժին 10 խումբ 4, դաս 1/ 4729 հոդվածից հատկացնելով 195000 դրամ, այդ թվում ՝

- ք.Դիլիջան Գետափնյա 4 բն. 26 հասցեի բնակիչ Թամարա Թաղևոսյանին -10000 դրամ
- ք.Դիլիջան Մոլդովական 14 բն. 13 հասցեի բնակիչ Յունիկ Արամյանին -10000 դրամ
- ք.Դիլիջան Շահումյան 18 բն. 3 հասցեի բնակիչ Էմմա Հարությունյանին -15000 դրամ
- ք.Դիլիջան Հակոբջանյան 76 հասցեի բնակիչ Յուրիկ Հովհաննիսյանին – 15000 դրամ
- ք.Դիլիջան Կամարինի 39 հասցեի բնակիչ Արծրուն Սահակյանին – 20000 դրամ
- ք.Դիլիջան Ռիսանողական 5 հասցեի բնակիչ Նաիրա Թովմասյանին – 30000 դրամ
- ք.Դիլիջան Օրջոնիկիձե 1-ին նրբ. թիվ 7 հասցեի բնակիչ Սիլվա Հովհաննիսյանին – 15000 դրամ
- ք.Դիլիջան Կալինինի 286 հասցեի բնակիչ Միրվարդ Բաբինյանին -20000 դրամ
- ք.Դիլիջան Շահումյան 2 բն. 8 հասցեի բնակիչ Աննա Ամիրխանյանին -20000 դրամ
- Ք.Դիլիջան Հակոբջանյան 108 հասցեի բնակիչ Վալերիկ Ասիլբեկյանին - 10000 դրամ
- ք.Դիլիջան Շահումյան 28 բն. 27 հասցեի բնակիչ Ալլա Դոլյանին -15000 դրամ
- Ք.Դիլիջան Հակոբջանյան 20 հասցեի բնակիչ Լաուրա Գրիգորյանին - 15000 դրամ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2014թվականի N 38-Ա

## ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել Հովսեփյան փողոցի 81 շենքի թիվ 30, երեք սենյականոց բնակարանը վարձակալին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող Հովսեփյան փողոցի 81 շենքի թիվ 30, երեք սենյականոց 91.7 ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանը վարձակալին ուղղակի վաճառքի ձևով,137550 դրամով ( մեկ քառակուսի մետրի համար սահմանելով 1500 դրամ) օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ
2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ
3. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
6. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
7. ՄԱՆԹԱՇՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
8. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
9. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
10. ՍԱՀԱԿՅԱՆ ՄԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 փետրվարի 2014թվականի N 39-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑԻ 3-ՐԴ ՆՐԲ. ԹԻՎ 14/1 ՀԱՍՑԵԻ 16.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Սպարտակ Ռազմիկի Հարությունյանը՝ Կամոյի փողոցի 3-րդ նրբ. թիվ 14 հասցեի, իր սեփականությունը հանդիսացող բնակելի տան 960.0քմ տնամերձ հողամասին կից գտնվող, Կամոյի փողոցի 3-րդ նրբ. թիվ 14/1 հասցեի 16.0քմ մակերեսով հողամասն ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 16.0քմ մակերեսով հողամասի օտարումն աճուրդային կարգով կխոչընդոտի անձի իրավունքը և օրենքով պահպանվող շահերը: Այն նպատակահարմար է օտարել ընդլայնման կարգով, վերը նշված բնակելի տան սեփականատեր Սպարտակ Հարությունյանին: Նշված հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է «Բնակավայրերի հողերի» տարածագնահատման տասներորդ գոտում:
Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջանի Կամոյի փողոցի 3-րդ նրբ. թիվ 14/1 հասցեի 16.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 19872 դրամ արժեքով օտարել քաղ. Սպարտակ Հարությունյանին:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Դիլիջանի Կամոյի փողոցի 3-րդ նրբ. թիվ 14/1 հասցեի 16.0քմ հողամասն, ընդլայնման կարգով, ուղղակի վաճառքի ձևով, 19872 դրամ արժեքով, քաղ. Սպարտակ Հարությունյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2014թվականի N 40-Ա

### ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 87/3 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ 23.6ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2014թ. հունվարի 16-ի թիվ 11-Ա որոշմամբ, քաղ. Սերոբ Եղիշի Ղազարյանի կողմից Կալինինի փողոցի թիվ 87/3 հասցեում ինքնակամ կառուցված 23.6քմ մակերեսով ավտոտնակի /հաշվարկված է արտաքին չափերով/ նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփ. վկայական՝ թիվ 06022014-11-0006/:

Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղաքացուն՝ վերոհիշյալ ինքնակամ շինությունը ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, վերոհիշյալ 23.6քմ մակերեսով ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 23.6քմ մակերեսով հողամասն օտարել քաղ. Սերոբ Ղազարյանին, համապատասխանաբար, 40120 դրամ և 45170 դրամ արժեքներով:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Կալինինի փողոցի թիվ 87/3 հասցեում գտնվող ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 23.6քմ հողամասը, համապատասխանաբար, 40120 դրամ և 45170 դրամ արժեքներով, քաղ. Սերոբ Ղազարյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ
2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ
3. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ